ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2013թ. թիվ 307-Ա

Է.ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի, 130-րդ հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Որոշում եմ.

1. Էվելինա Թովմասյանին 2013թ. դեկտեմբերի 6-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2009 թվականի հունվարի 8-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Էվելինա Թովմասյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. նոյեմբերի 25
ք.Վանաձոր